

Մ Ե Ծ Հ Ո Վ Ի Ի . *

Ծերուկի Ֆլաւիանը չնայելով որ շատապուժ էր, բայց չկարողացաւ Անտիոքից ուղարկուած ուրհանդակներին հասնել: Վերջիններս՝ չնայած Տաւրոսի վրայ կուտակուած ձիւնին եպիսկոպոսից մի քանի օր առաջ տեղ հասան և Անտիոքում պատահած խռովութեան մասին յայտնեցին Կայսեր: Թէոդոսը կատաղեց. արեւնը երեսը խփեց: Նա ցատուժից դողում էր և բռունցքները սեղմելով ճշում էր առամաների արանքից:

— Ի՞նչպէս. և իմ հանգուցեալ կնոջը, իմ անդինս, ամենասիրելի էակին, նրա՞ն էլ են վիրաւորել, անպատուել: Ծաղրել էն և իմ հանգուցեալ հօր արձանը. ի՞նչ էին արել նրանք յանդուգն, խաժամուժ ամբոխին: Ո՛հ Անտիոքը շատ թանկ կհատուցանէ ինձ: Այնտեղ փողոցներում խռովարանները քարշ են տուել իմ արձանները, ես նրանց մարմինները քարշ կտամ նոյն փողոցներում: Եւ արեան հեղեղներով կմաքրեմ ցեխի ամեն մի կաթիլը, որով նրանք պղծեցին սուրբ արձանները:

Հետեւեալ օրը երկու կայսերական բարձրաստիճան անձինք՝ Էլլեբիլս և Կեսար Պօլսից ուղարկուեցան Անտիոք: Նրանք կնքած ծրարներով տանում էին վճիռը, որը պէտք է տեղն ու տեղը, Անտիոքում, յայտարարէին:

Ճանապարհին նրանք պատահեցան Ֆլաւիանին: Կարճ ողջոյնից յետոյ իմացան թէ ով է գնացողը, ո՞ր և ի՞նչ նպատակով:

— Ո՛հ, Սրբազան հայր, դու ուշացար, ասացին Էլլեբիլսը և Կեսարը, Կայսրը արդէն իւր կամքը յայտնեց և մենք վճիռը տանում ենք Անտիոք: Գնանք միասին յետ. Կ. Պօլսում դու ոչինչ չես կարողանայ անել:

— Ես, ճշմարիտ է, ոչինչ չեմ կարող անել, բայց Աստուած կարող է, հեղութեամբ պատառխանեց Ֆլաւիանը, Աստուած բռնեց Աքրահամի դանակից, երբ նա արդէն բարձրացրել էր կապուած Իսահակի վրայ: Եթէ Աստուծն հաճելի լինի այժմս էլ կբռնէ այն դանակից, որը բարձրացած է խեղճ Անտիոքի վրայ: Ուրեմն դուք գնացէ՛ք Անտիոք Կայսեր կամքը կատարելու, իսկ ես կգնամ Պօլիս ինձ ուղարկող Աստուծոյ կամքը կատարելու: Միայն աղաչում եմ, երբ սկսէք Կայսեր կամքը ի կատար ածել, մի՛ մոռանաք և Աստուծոյ կամքը: Թող ինքն Աստուած ձեր

*) Տես Արարատ Յուլիս-Օդոստ.

քայլերը ուղղէ դէպի կայսեր և նրա մարդկանց բարիքը: Եւե-
րիսը և Կեսարը քրիստոնէայ էին և Ֆլաւիանի հանդիպումը
զօրեղ ապաւորութիւն թողեց նրանց վրայ: Նրանք երկար ժա-
մանակ առաջ էին գնում լուռ, խոր մտածման մէջ ընկղմուած:

— Ինչի՞ վրայ ես մտածում, հարցրեց Կեսարը:

— Շատ քանի վրայ. կայսեր, Անտիոքի, Ֆլաւիանի, ինձ,
վրայ: Գիտե՞ս, Կեսար, ես կցանկայի հէնց այժմս լինել Ֆլա-
ւիանի տեղ և գնալ Պօլիս իբրև Աստուծոյ կամքի պատգամա-
ւոր, քան այս ծրարներով Անտիոք գնալ:

Կեսարը ի խոր սրտէ հառաչեց:

— Ես էլ նոյն մտքին եմ: Ես մ'յժմ միայն հասկացայ, թէ
որպիսի մեծ միտք կայ Տէրունական աղօթքի այս խօսքերի մէջ.
«եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի»: և որպիսի ան-
դունդ այտեղ, երկրի վրայ, Աստուծոյ կամքի և մարդկային
կամքի մէջ:

Արեւելքում լուրերը զտրմանալի արագութեամբ են տա-
րածուում և ժողովրդի ասէ-կօսէն Ելլեքիսից և Կեսարից շատ
առաջ տեղ հասաւ: Անտիոքում նրանց գալուց մի քանի օր
առաջ լուր տարածուեց, որ Ֆլաւիանը ուշացել է, որ գալիս
են թագաւորական աստիճանաւորներ և արիւնալի վճիռ պիտք
է կայացնեն:

Սարսափ տիրեց քաղաքին: Ժողովրդին թւում էր, որ Թէ-
ոդոսի ցասման պատգամաւորները արդէն մօտ են և շուտով
կսկսեն գործել կախաղանները: Ասում էին, որ մօտենում են
նորանոր զօրաքնդեր և որ պիտի սկսուի քաղաքացիների միա-
համուռ կոտորած: Բոլորը դիմեցին Մայր եկեղեցի՝ այնտեղ
թաղկենալու, սեղանի հովանու ներքոյ պաշտպանութիւն գտնե-
լու համար: Սատիկ իրարանցում ընկաւ: Մարդիկ ընկնում էին,
խեղդւում, իսկ ամբոխը նորանոր խմբերով ներս էր խուժում
սաստկացնելով նեղուածքը:

Եկաւ քաղաքապետը և սկսեց ահաբեկուածներին հանգըս-
տացնել: Նա երդւում էր որ առ այժմ ոչինչ վտանգ չկայ, որ
դեռ ևս ոչինչ յայտնի չէ, որ զօրքի մասին ինքը ոչինչ չէ լսել:
Ժողովուրդը հանդարտուեց և ցրուեց:

Այն ժամանակ Բովհանը դիմեց ունկնդիրներին նոր ճա-
ռով: Նա ասաց.

— Ես արդէն քաղաքապետին շնորհակալութիւնս յայտնե-
ցի նրա հողատարութեան համար, որ լինելով հեթանոս, եկաւ
այստեղ (եկեղեցի) և ձեզ հանգստացրեց խաղաղացուցիչ յոյսեր
տալով: Բայց ձեր տեղ ես չմտ ամաչեցի: Ես չգիտէի թէ ինչ-
պէս պահուիմ ամօթուց: Ես պէտք է կարմրէի, որ այնքան շատ

և երկարատե եկեղեցական քարոզներից և հոգևոր մխիթարութիւններից յետոյ հարկ եղաւ արտաքին սիւովման, քաղաքական իշխանութեան խրատին: Այն ժամանակ ինչ միտք ունի ձեր այստեղ հաւաքուելը և քրիստոնէական կեանքի լուսաբանութիւնը լսելը: Միթէ լոռողութիւններիդ հաճոյք պատճառելու համար միայն: Եթէ դուք այստեղ լիանում էք կենդանի աւետարանական ջրով, իսկ տուն էք դառնում դատարկ և կեանքի մէջ դործում էք չոր ու ցամաք հոգւով, ի՞նչ օգուտ այդ լիութիւնից: Ըմբշամարտին ցոյց տուր ոչ թէ խրատ լսելիս, այլ դօտեմարտի ժամանակ. նոյնպէս և ջերմեռանդութիւն ցոյց տուր ոչ թէ միայն ուկնդրութեան, այլ և դործունէութեան ժամանակ:

Ո՞ւր է ուրեմն ձեր հոգու տոկունութիւնը, ձեր քրիստոնէական արժանապատուութիւնը, ձեր հաւատք առ Աստուած և անձնուիրութիւնը դէպի Նրա կամքը: Ձեզ համար քաղաքապետի խօսքը աւելի ոյժ և ներգործութիւն ունի, քան Արարչի խօսքը: Ձեր խղճի խաւարը և ձեր հոգու մէջ Աստուածային արդարութեան պայծառ երեսի սքողուելը աւելի քիչ, քան ձեզանից դժգոհ քաղաքապետի երեսի ստուերը: Եւ դուք վախենում էք ոչ թէ հոգու նեղուածքից և մեղքի կապանքներից, այլ բանդարգելութիւնից: Ամեն օր հոգւով մեռնելով և անհոգութեամբ ձեր մէջ Աստուծուն սպանելով՝ դուք ուարժաւորում էք մարմնի մահից: Նայեցէք նրան որ գրել է իւր մասին «Ես Պօղոս, կալանաւոր եմ ի Քրիստոս» (Իիլիւպ. ա.) և սովորեցէք նրանից: Նրա համար մի սաղսափելի բան կար միայն—անջատուել Քրիստոսից, իսկ մնացեալ բոլորը, որ սրան չէր վերաբերում, նա ոչ ցաւալի էր համարում և ոչ հաճելի: Այն բռնաւորները և ժողովուրդները, որոնք շնչում էին ցառումով, նրան թւում էին իբրեւ մոծակներ, իսկ մահը և անհամար տանջանքները տղայական խաղալիքներ. բացի այն դէպքերից, երբ նա տանջանք էր կրում Քրիստոսի համար, այն ժամանակ նա հրճւում էր իւր կապանքներով այնպէս, ինչպէս Թագաւորը՝ իւր սոկեղէն թագով: Նա նոյն իսկ բանդում ապրում էր ինչպէս երկնքում: Եւ լէրքեր ու դանակոծութիւններ ընդունում էր աւելի բաւալանութեամբ, քան ուրիշները ընդունում են պարգևներ: Դրա համար էր որ Փեստոսի մօտ դատի գալով, նա դուրս եկաւ գերելով դատաւորի սիրտը: Այդպէս պէտք է լինէր և այսօր: Պէտք էր և քաղաքապետը զարմանար ձախորդութեան ժամանակ ձեր ցոյց տուած ազնիւ արիւթեան վրայ և այստեղից հեռանար ձեր վարք ու բարքից դաս առնելով: Իսկ դրա փոխարէն նա խրատում էր ձեզ, մէկ հանդարտեցնում, մէկ յանդիմանում

ձեր այդ անժամանակ և անմիտ երկիւղի համար: Մենք, քրիստոնեաներս, ի՞նչպիսի տաքերով պիտի նայենք անհաւատների վրայ, երբ այդպէս վախկոտ ենք: Ի՞նչ լեզուով պէտք է խօսենք և համոզենք նրանց չվախենալ առաջիկայ ձախորդութիւններից, երբ մենք այս խառնակութեան ժամանակ նապաստակից էլ երկչոտ դարձանք:

Աւնինդերները շփոթուած ցրւում էին տները և աւելի հանգիստ սրտով սպասում էին կայսերական աստիճանաւորներին: Սակայն վրդովմունքը չանցկացաւ: Ամեն մարդ բերում էր մի նոր լուր և Անտիոքին տիրում էր մէկ վախ ու սարսափ, մէկ յոյս և հանգստութիւն. վերջապէս Էլլիբիւսը և Կեսարը եկան:

Նրանք քաղաք մտան մեծ զօրքի գլուխ անցած: Անտիոքի վրայով սոսկում անց կացաւ: Փողոցները լիքն էին ժողովրդով, բայց ամեն ինչ լուռ էր: Մարդիկ զգում էին որ փոթորիկ է մօտենում, որ նա արդէն վրայ է հասնում, կախում է, բայց չգիտէին թէ ո՛ւմ և ինչպէ՞ս պիտի կործանէ:

Ամենավատ հետեւանքի էին սպասում:

— Արդեօք այս գործին Կայսրը ինչպէ՞ս նայեց, հարցնում էին Էլլիբիւսին և Կեսարին տեղական իշխանաւորներից ծանօթները:

— Վատ. Կայսրը սառտիկ զայրացած էր:

— Ի՞նչ պատիժներ են նշանակուած:

— Չգիտենք, հրամանը կնքած է: Կարգադրուած է հրապարակում բաց անել և կարգալ: Կարծում ենք լաւ բան չի դուս գալ:

Հաղարաւոր սգազգեստ, գունատ դէմքով ամբոյսը բռնել էր կուսակալի տան առաջի ամբողջ հրապարակը:

Էլլիբիւսը և Կեսարը բարձրացան պաարաստած ամբիոնի վրայ, ծրարը բաց արին և սկսեցին կարդալ:

Ա. Անտիոքը զրկւում է իւր բոլոր արտօնութիւններից և անցնում է հասարակ քաղաքների կարգը: Արեւելի մայրաքաղաք է ընտրւում Լատիկիէան:

Բ. Թատրոնները, կրկէսները, բաղանիքները և այլ զուարճութեանց տեղերը փակւում են. Դաֆնոն, Անտիոքի պարծանքը, մատնւում է լուութեան:

Գ. Ժողովրդին, կատարեալ աղքատներին, կրճատւում է ձրի հաց տալը, ինչպէ՞ս այդ լինում էր առաջ՝ նման Պօլսին և Հռոմին:

Դ. Առաջադրւում է գործի նոր և խտադոյն քննութիւն: Բոլոր յայանի մարդկանց բռնել և շղթայակապ անել: Կասկա-

ծառերներին տանջանքի ենթարկել և յանցաւոր դուրս եկածին անյապաղ մահուան դատապարտել:

Ամեն մի որոշումը ամբողջ լսում էր, որպէս կայծակի հարուած:

— Անտիրը մայրաքաղաք չէ՞. խայտառակութիւն, ստորութիւն ամբողջ Արեւելի առած:

— Փակուած են բաղանիքները, կրկէսները, թատրոնները, խլուած բոլոր գուարճութիւնները:

— Հացի բաշխում ևս չէ լինելու. այս ի՞նչ է. հազարաւոր մարդիկ սովամահ պէտք է լինին:

— Իսկ ղերջինը դառնագոյնն է. քանտէր, տանջանքներ, կախաղաններ:

Հրապարակը թնդաց լաց ու շիւանով: Շատերը շորերն էին պատառոտում, կրծքները ծեծում բռունցքով. գլխներին քսում և մաղերը փետում: Միևնոյն ժամանակ զինուորները շրջապատում էին ամբոխին և լրտեսների ցուցմունքով շատերին տեղն ու տեղը կալանաւորում էին: Զինուորների միւս մասը տներն էր մտնում և բոլոր կառկածաւորներին յափշտակում—տանում: Երեկոյեան դէմ քանդերը լեփ—լեցուն էին: Սկսուեցաւ հարցմունքներ, տանջանքներ և հարիւրաւոր մարդիկ հէնց այստեղ մահուան դատապարտուեցան: Իսկ ղիշերը հրապարակում պատրաստութիւն էին տեսնում մահուան պատիժներ տալու: Պատրաստում էին կառավարման տեղեր, խորոյկներ, ամրացնում էին սղոյեւու գործիքներ:

Առաւօտը քացուեցաւ: Երկինքը մռայլ էր. քաղաքի վրայ կախուած էր սև ամպ և երևի պատրաստուած էր արցունք թափելու:

Ելլերիսը և Կեսարը կուսակալի պալատից դուրս գալով քաղաքի գլխաւոր փողոցով ուղևորուեցան դէպի կառավարման տեղը: Փողոցը դատարկ էր. ոչ ոք չէր երևում: Օդի մէջ տիրում էր ինչ որ երկիւղ. միայն լսում էր ելլերիսի և Կեսարի պահակ զինուորների ոտների տրոփիւնը:

Յանկարծ հեռուից երգեցողութեան ձայն լսուեց: Թէ ի՞նչ էին երգում չէր կարելի հասկանալ, բայց, որքան լսում էր, երգողները շատ էին: Երգեցողութիւնը մէկ ցածրանում, մէկ բարձր էր հնչում, կարծես փոխ—փոխ էին երգում: Այնպէս էր թւում որ մի քանիսը երգում են, միւսները ձայնակցում:

— Այս ի՞նչ երգեցողութիւն է, ուսերը վեր քաշելով ասաց ելլերիսը. կարծեմ երգելու ժամանակ չէ: — Կեսարը լարեց լսողութիւնը:

— Աղօթքի է հման. արգեօք չե՞ն թաղում մէկին:

— Շատ բարձր են երգում. ձայներ էլ շատ են լսում:

Երգեցողութիւնը քանի գնում աւելի որոշ էր լուում: Ձայնը դալիս էր Անտիոքի շրջապատի լեռներից: Նոյն իսկ կարելի էր ընդհանուր եղանակը ևս հասկանալ: Քիչ ժամանակից կողքի փողոցներից՝ հեռւում երևացին և երգիչները: Նրանք դուրս եկան լայն, խիտ կարգերով և շուտով բռնեցին գլխաւոր փողոցի հակառակ ծայրը:

Հետիոտ երգողները իրանց առաջ տեսնելով նորեկ բարձրատիճան պաշտօնեաներին՝ շրջապատուած փառահեղ հետևորդներով, կանգ չառան: Նրանք գնացին Նլլեբիլի և Կեսարի առաջ՝ շարունակելով երգեցողութիւնը:

Շուարած բարձրատիճանները ձիերը կանգնեցրին և հարցական հայեացք ձգեցին իրանց հիանորդներին վրայ:

— Ի՞նչ է նշանակում այս և ի՞նչ են երգում դրանք,

Ոչ ոք ոչինչ չէր հասկանում: Քչերն էին հասկանում և երգեցողութիւնը: Ամբոխը երգում էր տեղական, ասորական լեզուով: Երգում էին սաղմոս:

Ամենքից առաջ դալիս էր մի խումբ քաղաքում չտեսնուած, օտարոտի ծերունիներ: Նրանք հալ ու մաշ էին եղած և արևակէզ, ցնցոտիներով ծածկուած, դժգոհած մորուքով և բաց գլխով: Նրանք երգում էին այնպիսի խապոտ ձայնով, որ կարծես երկարատև անգործութիւնից ժանդոտել էր:

— Մի՛ յուսայք յիշխանս, յորդիս մարդկան, զի ոչ գոյ ի նոսա փրկութիւն, ալէլուիա»: Ամբոխը նրանց բերանից առնելով ձայնեց— ալէլուիա՛:

Այդ «ալէլուիան» քանի գնաց աճեց, անցաւ հաղաւորաւոր ցաւալի հառաչով և հետզհետէ լսուեց հեռւում՝ ամբոխի յետևը: Եւ դեռ ևս այստեղ չէր կտրուել «ալէլուիայի» ձայնը, ծերունիները առջևից շարունակեցին սաղմոսը:

— Ելցէ հոգի ի նոցանէ և դարձցին անդրէն ի հող և յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդ նոցա, ալէլուիա՛. «Ալէլուիա՛, ալէլուիա՛, ալէլուիա՛» կրկին հաղաւոր ձայներով աղաղակեց ամբոխը:

— Երանի՛ ում Տէր Աստուած Յակովբայ օգնական է նորա և յոյս նորա ի Տէր Աստուած է, որ արար զԵրկինս և զԵրկիր, զծով և զամենայն որ ի նոսա: Որ պահէ զճշմարտութիւն յաւիտեան և առնէ իրաւունս զրկելոց, տայ զհաց քաղցելոց— ալէլուիա՛:

Ամբոխը գոռաց ի պատասխան— ալէլուիա՛:

— Մեծ է Տէր մեր և մեծ է զօրութիւն նորա. իմաստութեան նորա ոչ գոյ բաւ. օրհնեցէք զՏէր խոստովանութեամբ,

սաղմոս տաացէք նմա օրհնութեամբ: Որ զգեցոյց զերկինս ամպօք, պատարաստ արար զանձրև յերկիր, բուսոյց զխոտ ի լերինս և զգալարի ի ծառայութիւն մարդկան. Որ տայ անտոնոց զկերակուր իւրեանց, ձագուց ագռաւուց, ոյք կարգան առ նա—ալէլուիա՛:

Ամբոխի միջով անցաւ նոր ալէլուիա՛, ալէլուիա՛, ալէլուիա՛:

Ելլիբէխը և Կեոարը կանգնած էին կախարդուածի պէս: Այդ «ալէլուիաները», որոնք հնչում էին փողոցի վերի՝ հազաւակ ծայրից և քալիս էին իրանց հանդէպ, ծածկեցին թէ թէրոգոսի հրամանը, թէ երեկուայ տանջանքները և թէ առաջիկայ մահուան պատիժները:

Նրանք կամենում էին կրկին ու կրկին լսել հազար ձայնի «ալէլուիա»:

—Ո՛ր են դալիս դրանք, ասաց պահակ զինուորների գլխավորը, որ կանգնած էր Կեոարի մօտ. նրանք այդպիսով կարող են մեր ճանապարհը բռնել, արգելել մեզ, պէտք է շտապել:

—Եւ իսկապէս, ի՞նչ ենք անում մենք, շտապով վրայ բերեց Ելլիբէխը, օ՛ն առաջ.

Թերունիները երգում էին.

—Ոչ թէ ընդ զօրութիւնս ձեռք կամեցաւ Տէր և ոչ ընդ իրանս առն հսկայի հաճեցաւ. այլ հաճեցաւ Տէր յերկիւղածս իւր և ընդ այնոսիկ, ոյք յուսան յողորմութիւն նորա:

Այժմ ամբոխը արդէն մօտ էր: Բոլոր առաջից եկողներին կարելի էր տեսնել: Ուշագրաւ տեսարան էր: Գնում էին նիհար, երկարամօրոճ, աչքերի վրայ կախ ընկած ոպիտակ ունքերով ծերունիներ. ոմանք յենուելով ճիւղոտ դաւաղանի վրայ, ոմանք էլ այնպէս, առանց դաւաղանի: Նրանց երեսը կնճռոտ կաշին լեռների քամիների և արևի կիզիչ տաքութեան ազդեցութիւնից սևացել էր. նոյնպիսի սև-մոխրագոյն ոտքերը մերկ էին: Նրանց չորացած ուսերը ծածկուած էին կամ մորթով, կամ ուղտի բրդից հիւսած կոշտ կտորով:

Դրանք ճգնաւորներ էին, շրջափայ լեռների բնակիչներ: Առանձնանալով իրանց այրերի մէջ, որոնք դառնում են դժուար մատչելի լեռնագագաթների դառնվայրերում, նրանք վաղուց անձնատուր էին եղել իրանց փակ հոգեկան աշխարհին: Նրանք լեռների լռութեան և քարանձաւների մթութեան մէջ խորամուխ էին լինում իրանց հոգու մէջ և այնտեղ փնտրում Աստծուն այնպէս, ինչպէս ուրիշները նոյն լեռների վերի շերտերում փնտրում էին ոսկի և թանգագին քարեր:

Նրանցից շատերը տասնեակ տարիներ Անտիոքի փողոցները չէին տեսած: Նրանք այստեղ դորձ չունէին, նրանք այս քաղաքում աւելորդ էին, օտար քաղաքային աղմուկին:

Բայց այժմ ուրիշ բան էր. քաղաքի վրայ կախուած էր մահը: Ժողովուրդը յուսահատ դրութեան էր. ով կարող էր, փախչում էր լեռները, այնտեղ փնտրում փրկութիւն, ծերերի մօտ ապաստան խնդրում: ճգնաւորները իմացան թագաւորի ցասման գուժաբերների գալուստը, իմացան Նոյնպէս Նշանակուած մահուան պատիժների մասին և լճագիւղի իրանց լեռներից իջնել Անտիոք:

— Գնանք մահուան դատապարտուած մեր եղբայրների մօտ, կանչում էին նրանք իրար, շրջելով այրերը և ժայռերի մէջ գանուող աղքատիկ խրճիթները:

— Թող խնդրենք, աղերսենք նրանց փոխանակ, իսկ եթէ խնդրներս անգօր լինին, մեռնենք նրանց համար: Անտիոքացիք երբ ճգնաւորների մօտենալու համբաւը առանձն խմբերով բնդ առաջ եկան և նրանց հետ միասին ուղղւորուեցան Ելլիբիսի և Կեսարի ճանապարհը կտրելու:

Գլխաւոր փողոցի շրջապատյալ վրայ, որ տանում էր դէպի պստի հրապարակը, իրար հանդիպեցին երկու ամբոխ. Բարձր-աստիճանաւորները իրանց հետեորդներով և ճգնաւոր-ծերունիները ժողովրդի հետ: Երգեցողութիւնը լռեց:

Ժողովուրդը կանգնած էր պատի պէս և արդելում էր փառահեղ զօրագնդի ճանապարհը:

— Ճանապարհ տուէք, գոռաց պահակների գլխաւորը:

Ամբոխը կանգնած էր անշարժ: Առաջ եկաւ մի ճգնաւոր. նա ամենից աւելի չօր էր, մարմինը նման էր կմախքի, կաշուի տա՛լի ոսկորները կարելի էր համարել:

Նա շտկուեցաւ, որչափ ներում էր իւր բաղմամեայ ծերութիւնը, հաստատուն քայլերով և անվեհերութեամբ մօտեցաւ բարձր-աստիճանաւորներին և ձախ ձեռքով բռնելով Կեսարի ձիու սանձից, աջ ձեռքով Կեսարին և Ելլիբիսին ցոյց տուաւ դետինը: Կեսարը մտածեց թէ արդեօք նոր խռովութիւն չի՞ սկսուում, ծերունու ձիուց իջնելու պահանջը կոշտ յանդգնութիւն համարեց և սրից բռնեց, որ խի՛է յանդուգն ծերունուն. ծերունին այդ միջոցին ինչ որ մի բան էր ասում. Բայց Կեսարը ոչինչ չէր հասկանում, ծերունին խօսում էր տեղական. ասորերէն լեզուով, որ բարձր-աստիճան Յոյնին անհասկանալի էր: Ամբոխը տեսնելով ծերունու գլխի վրայ բարձրացած սուրը, աղաղակեց ինչպէս վերաւորուած վայրենի գաղան:

— Մի՛ գիպշիր, սուրբ տեղը դիր. դա դարիակեր է, Մահեդոն դարիակերը:

Կեսարը բարձրացած աղաղակն էլ չհասկացաւ, բայց պահակ գնդի գլխաւորը խիոյն բռնեց նրա ձեռքից: Վերջինս հասկացաւ ժողովրդի աղաղակը և իմացաւ որ իրանց առաջ կանգնած է Արևելքի բոլոր քրիստոնեաներից յարգուած սուրբը:

— Տէր իմ, Կեսարի ահանջին փոփոաց զօրապետը, սա Մահեդոնն է, մեծ մենակեացը: Նա արդէն շատ ու շատ տարի է, որ իրան նեղութիւն չի պատճառում կրակ վառելու կերակուր պատրաստելու համար: Աչինչ չի եփում: Միմիայն չոր դարի է ուտում: Ասում է որ մենք մեր փորը Աստուած ենք դարձրել, մեր խոհանոցներում շինել ենք նրա համար սեղաններ և միայն այն ենք մտածում, թէ ի՞նչպիսի համադամ զոհաբերութիւններ անենք նրան: Իսկ ինքը փորին չի ուղում ծառայէ, այլ . . .

— Գիտեմ, լսել եմ, ընդհատեց Կեսարը, վեր եկաւ ձիուց և յարգոյաբար գլուխը խոնարհեցրեց Մահեդոնի առաջ: Նոյնպէս և Ելլիբիւրը, որ թանգագին հանդերձներ էր հագած, ոսկեայ ձեռնապաններով և ծնկապաններով էր զարդարուած, յարգանքով խոնարհուեց գլգլուած շորերով ծերունու առաջ:

— Ի՞նչ ես ուզում, հայր, հարցրեց Կեսարը.

Մահեդոնը դարձեալ սկսեց մի քան ասել ատորերէն, նա յունարէն չգիտէր: Մօտեցաւ կուսակալը և սկսեց ահանջ դնել Մահեդոնի խօսքերին: Վերջինս ասում էր.

— Մենք եկել ենք այնտեղից, ամպերի մէջ ցցուած լեռներից. այստեղ ուղարկուած ենք Աստուծոյ կողմից՝ յանուներինքի կամքի դադարեցնելու ամեն մի երկրային վրէժխնդրութիւն: Յետ դարձէք կայսեր մօտ և ասացէք նրան, որ Աստուծոյ ժողովրդի ձեռքով կործանուած պղնձէ արձանները կարելի է վերահանգնել, իսկ եթէ Թէոդոսը ոչնչացնէ թէկուզ մի կենդանի, անձեռագործ արձան, մի մարդ, այն ժամանակ նրա համար անհնարին կլինի վերահանգնել մահուան մատնուածի մի մազն անգամ: Թող ուրեմն դադարեցնէ նշանակուած անողորմ և անսիրտ ոչնչացումը ոչ թէ արդէն մեռած թաղաւորական արձանների, այլ կենդանի Աստուծակերպերի:

Մահեդոնի խօսքերը շլացրին նոյն իսկ հեթանոս կուսակալին:

— Հաղւոյ որպիսի՞ ոյժ, մտածեց նա և յունարէն թարգմանեց Կեսարին:

Ելլիբրիսը և Կեսարը համաձայնեցան, որ այդպիսի խօսքերը չի կարելի չլսել, որ պէտք է կայսեր հաղորդել Սնտիոքի նոր ճարեխօսների մասին:

— Մարդ չի կարող ձեզ կանգնեցնել, բայց Աստուած կարող է, յիշեցին նորա ճանապարհին Ֆլաւիանի խօսքերը և թեթեւ շունչ քաշեցին:

— Ի՞նչ անենք ուրեմն, հարցրեց կուսակալը:

— Առ այժմ պատիժները յետաձգենք և կրկին հարցնենք կայսեր:

— Իսկ ո՞վ է հարցնելու, ո՞վ կյանդգնի գնալ Պօլիս կայսերական կամքի փոփոխման համար խնդրելու, դարձեալ հարց տաջարկեց կուսակալը:

— Ե՛ս, հաստատապէս ասաց Կեսարը, Մակեդոնը ի՞մ ձիուն կանգնեցրեց, ինձ դիմեց խօսքով. ուրեմն ես էլ պէտք է գնամ. Աստուծոյ պաղ ցուցմունքն է այս:

— Թող այդպէս լինի, համաձայնեց Ելլիբրիսը, բայց եթէ մի քան պատահի, պատասխանատու ենք երկուսս: Ես պատիժները կվերացնեմ մինչև նոր վճիռը: Հէնց այդպէս էլ ասա՛ Կ. Պօլսում այն դէպքում, երբ անբաւականութիւն ծագի գործի այս անսակ ընթացք ստանալու պատճառով:

— Շուտով հասիր հրապարակ, յանձնարարեց նա պահակի գլխաւորին և ասա՛. «Այսօր մահուան պատիժ չի լինի»: Թող դատապարտեալներին կրկին յետ անեն ըսնտ: Նրանց համար կայսեր նոր դիմում կլինի:

Ժողովուրդը ճանապարհ քաց արաւ և պահակի գլխաւորը ձիով հասաւ հրապարակ. իսկ ըստ ճրատութեան պաշտօնեաները և նրանց հետևորդները դարձան յետ: Նրանց հետեւեցին ճգնաւորները ժողովրդի հետ: Կեսարը խնդրեց նրանց, որ իրանց կողմից մի նամակ գրեն Թէոդոսին: Այդ միջոցին երկնքի մի մասում ամպերը ցանցառացան և գարնանային պայծառ արեգակի շողշողուն լոյսը թափանցեց երկրի վրայ, անցկացաւ հաղարաւոր ամբոխի միջով և կանգ առնելով խայտաց բարձրատիճան պաշտօնեաների ոսկեայ սաղաւարտների վրայ:

Երկինքը ժպտաց. արեգակը խայտաց ուրախութեամբ. խօսում էին ժողովրդի մէջ: Իսկ ճգնաւորները նոր սաղմոս էին երգում:

— Գովեա՛ Երուսաղէմ՝ զՏէր և օրհնեա՛ զԱստուած քո Սիօն. Զի զօրացոյց զնիգս դրանց քոց և օրհնեաց զորդիս քո ի քեզ. Որ եդ զսահմանս քո ի խաղաղութեան, պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ: Որ առաքէ զքան իւր յերկիր, վաղվաղ ընթանան պատգամք նորա — ալէլուիա:

եւ հաղարար որ ձայներ այժմ թերախ ձայնեցին—ալէլուիա։
Թէեւ քաղաքի հրամարտկում տեղի ունենալիք մահուան
պատժի առժամանակեայ վերացումը մի փոքր հանգստացրեց
շատերին, մանաւանդ դատապարտուածներին մերձաւորներին,
սակայն քաղաքը ընդհանրապէս վհատուած էր, բոլորի արեւ-
ութեան պատճառը այն էր, որ Անտիոքը զրկւում էր իրա-
ւունքներից և առաւելութիւններից։ Նրանք սովոր լինելով
ձիարշաւների, կրկէսների, զանազան տեսարանների, քաղա-
նիքներում ժամերով զրոյց անելու՝ այժմ ցաւում էին որ քա-
ղաքում վերջանում են ձիարշաւները, փակւում կրկէսներն ու
քաղանիքները։

Յովհան Ոսկերեւանը՝ ցաւելով քաղաքացւոց այդպիսի
փոքրոգութեան վրայ, որ քաղաքի այդ ծանր օրերում իսկ
աւելի մտածում էին դատարկ զուարճութեանց և արտաքին
գովասանութեան մասին, քան իրանց ներքին հոգեկան վերա-
նորոգման մասին, ունկնդիրներին դիմեց նոր քարոզով։

— Դուք ցաւում էք որ ձեր քաղաքը զրկուած է առա-
ւելութիւններից։ Բայց որ հասկանաք թէ ինչու մն է կայա-
նում քաղաքի առաւելութիւնները, այն ժամանակ պարզ
կերպով կտեսնէք որ եթէ դուք, քաղաքում ասպրողներդ, չո-
չնչացնէք այդ առաւելութիւնները, ուրիշ ոչ ոք չէ կարող
նրանց խլել ձեր ձեռքից։ Հատկացէք որ քաղաքի դարդը և ա-
պահովութիւնը կազմում է ոչ թէ նրա մեծութիւնը, այլ քա-
ղաքացիների հոգեկան արժանաւորութիւնը։

Ինձ համար այն քաղաքը, որի միջից բացակայ են Աս-
տուածասէր բնակիչներ, յետ ընկած դիւղից էլ վատ է, դա-
տարկ այրերից էլ անփառունակ, թէև թագաւորներից հաղա-
րաւոր պատիւներ ստանայ։ Հետեապէս եթէ ուզում ես դո-
ւել քո քաղաքը մի՛ խօսիր նրա գլխաւորութեան մասին և
ոչ նրա սքանչելի արուարձանի, Դաֆնայի մասին։ Ոչ նոճիների
մեծութեան ու շատութեան և ոչ քաղաքի բազմամարդ լի-
նելու մասին։ Մի՛ խօսիր և այն մասին, որ քաղաքը ունի փա-
ռահեղ և գեղեցիկ շինութիւններ, կամ բազմաթիւ կոթող-
ներ, ընդարձակ սրահներ և զուարճութեան վայրեր, որտեղ
ապահով կերպով կարելի է մինչև ուշ գիշեր մնալ։ Մի՛ խօ-
սիր և առւտրական ապրանքների շատութեան մասին։ Այդ
բոլորը արտաքին բաներ են։ Ձեզ համար բոլորովին կողմնակի,
օտար բաներ։ Այդ բոլորը քար է, փայտ, ցնցոտի, մետաղ։
Այն ձեր շրջանակն է, արձանների պատուանդանը. իսկ շրջ-
անակի միջի պատկերը, պատուանդանի վրայի արձանը՝ ինք-
ներդ էք, ձեր ներքին աշխարհը, ձեր հոգին, ձեր մաքերը, ձեր

դրացմունքները: Թոյլ տուէք ինձ հեռանալ այդ պատկերով, իսկ եթէ նրա շորս կողմը շրջանակ կ'ա՛յ թէ չէ և եթէ կայ ինչպիսի՜ է-այդ ինձ համար միևնոյնն է: Ես կուզենայի պար-
ծենալ ձեր մեծ հոգիների առաւելութիւններով, գեղեցկու-
թիւններով և գլխաւորութիւնով, ձեր սրտի հարստութիւնով: Պարծեցէք, եթէ կարող էք, ոչ թէ ձեր հրապարակներում
գտնուող թէկուզ մաքուր ոսկուց ձուլում՝ արձաններով, այլ
Առաուծոյ պատկերով, որ փայլում է ձեր մէջ: Ահա այդ կլինի
ձեր արժանիքը, այդ կլինի քաղաքի առաւելութիւնը: Ասկայն
այդ ոչ որ չի կարող պարգևել ձեզ և ոչ խելի ձեզանից: Միայն
դուք կարող էք նրան ձեռք բերել, կորցնել, պահպանել և կամ
աւելի՜ ևս սեծացնել:

Այդպէս էր քարոզում Յովհանն Անտիոքացոյ շարուն-
անկաբար:

Կեռաքը յետ դարձաւ Կ. Պօլիս՝ ապստամբած և արդէն
իսկ դատապարտուած Անտիոքի համար նոր միջնորդութիւն
անելու: Այս անգամ խնդրի առկա տարողքել էին շրջակայ
էեւնաքնակ ճգնաւորները:

Անտիոքացիք սիրտ առան, նրանք առում էին.

— Այժմ կարելի է հանգիստ լինել:

— չիմա կայսրը կլսի. զրոյնքը հասարակ մարդիկ չեն,
այլ սուրբ հայեր:

— Լռակեանքներն են խօսում:

— Փսնք Առաուծոյ, Կեռաքն էլ մեր կողմն է:

— Դէ՛հ, փարձանքը անցկացաւ: Այժմ դատիկը կարող ենք
ուրախ տօնել:

Անցաւ մեծ պատի կէտը և թեթեամիւս Անտիոքը՝ մոռա-
նալով ոչ վաղուցուայ անհանգստութիւնը, սկսեց Չատիկի տօն
սարքելու մասին մտածել:

Որպէս հոգատար բժիշկ Յովհանն ուշադրութեամբ հե-
տևում էր իւր անհոգ հոգևոր հօտի ամեն մի փոփոխութեանը
և նոր քարոզի մէջ իսկոյն և եթ ի նկատի առաւ իւր հօտի
նոր արամազբութիւնը:

— Շատերը, սովորեցնում էր Յովհանն, սուրախանում են
և առում իրար. «Մենք յաղթեցինք՝ մեծ պատի կէսը պահա-
սեցաւ: Այդպիսիներին խնդրում եմ չսուրախանալ պատի կէսը
պահասելուն համար, այլ թող ուշադիր լինեն արդեօք պահա-
սել է իրանց ներսում եղած չարութեան կէսը և այն ժամա-
նակ միայն կարող են սուրախանալ և հրճուել: Ուստի և թող
ամեն մէկը մտածի թէ իւր ո՛ր պահատութիւնն է ուղղել և
ինչպիսի բարի յատկութիւն ձեռք բերել ինչ վատ բանից է

ազատուել և ինչո՞ւմ լուաւցել: Իսկ եթէ միայն պատ է պահել առանց ուղղուելու, այդ բոլորովին անօգուտ է: Նա որ չի պահում: Կարող է թողութիւն գտնել՝ պատճառելով մարմնի անկարողութիւնը: Իսկ ի ներքուստ չուղղուողը ի՞նչ արդարացում կարող է գտնել:

Դու չես պահել հիւանդութեանդ պատճառով, շատ լաւ: Խաւայն ինչո՞ւ չես հաշտուել թշնամիներիդ հետ: Ինչո՞ւ չես ներել նրանց, դու ինձ այս պատասխանիր: Արդեօք այստեղ ևս չե՞ս ուղղում պատճառ բերել հիւանդութիւնդ: Եւ դարձեալ՝ եթէ դու սրտումդ աճեցնում ես նախանձ և չարութիւն, ինչո՞վ ես արդարացնում քեզ՝ հիւանդութեամբդ: Ճիշդ է, դրա պատճառը հիւանդութիւնն է, բայց ոչ մարմնի, այլ հոգւոյ հիւանդութիւն: Եւ ահա հոգին հիւանդ է զանազան ցաւերով, անթիւ վէրքերով: Դրանց բժշկութեան՝ ուղղելու ժամանակն է պսոք: Ահա նա վերջանում է, Խաւայն մենք բժշկութիւնը դեռ չենք սկսել: Եւ չենք էլ մտածում այդ մասին: Միայն ուրախ ենք, որ ժամանակը անց է կենում, պսոք պահասում է, շուտով Զատիկ կգայ: Ի՞նչ է մեր ուրախութեան պատճառը: Ճիշդ է Զատիկը կգայ: Բայց չե՞ որ մենք Ս. Յարութեան օրերին էլ կմնանք նոյն յարութիւն չառած մեռեալները մեր սրտերում:

Եւ այդպէս ամէն օր Յովհանն Խօսում էր ապաշխարութեան մասին: Իւր Խօսքով բաղխում էր ժողովրդի սիրտը, աշխատում էր զարթեցնել, ամրացնել լուսադոյն բարի գգացմունքներ: Այդ միջոցին Ֆլաւիանը Կ. Պօլսում ի դուր էր կայսեր հետ տեսակցութիւն խնդրում: Թէոդոսը չափազանց զայրացած խռովայոյզ Անտիոքի վրայ, չէր ուղղում տեսնել իսկ նրա ծերունազարդ հովուապետին:

— Թող յետ դառնայ, աղաղակում էր նա խեղդուելով կատաղի ցատումից: Նրա տէրաէրական գործը չէ՛ իմ կարգադրութիւններին խառնուելը: Ես կոտորեցնեմ նրանց յարգել արձաններին: Ես կօտիպեմ նրանց դողալ լոկ իմ անունը լսելիս:

Ֆլաւիանին յայտնեցին Թէոդոսի ցտաման մասին և խորհուրդ տուին վերադառնալ:

— Յետ դարձի՛ր, որբազան: Կոտում էին պալատականները, մենք օտար լինելով հանդերձ՝ վախենում ենք քո փոխանակ: Կայսրը զայրացած է: Նա այդպիսի բոպէներին սարսափելի է. պալատում այդ միջոցին բոլորը դողում են նրա առաջ:

— Ի դուր, հեղաւար գլուխը շարժելով առաց Ֆլաւիանը, դողալ պէտք է միմիայն Առաւօծոյ առաջ, իսկ կայսեր ցատումը պէտք է մեղմացնել:

Պալատականները ժպտացին:

— Մեղմացնել. Դու, սրբազան, գործը շատ միամիտ կերպով ես ըմբռնում: Ո՞վ կյանդպնի որևէ բանի մէջ արգելք հանդիսանալ կայսեր:

— Դուք բոլորդ, հաստատապէս առաջ Ֆլաւիանը, եթէ միայն դուք կեսարի փաղաքշողներ չէք, եթէ նրա խղճալի հաճոյակատարները չէք, այլ հաւատարիմ ծառաներ. եթէ զբօսանքի ժամանակ կայսրը պատահամբ դայթի, դուք բոլորդ լիազ էք տալիս նրան բռնելու, որ չընկնի. ի՞նչպէս էք ուրեմն թոյլ տալիս որ նա ընկնի ցառման անմտութեան մէջ, չէք բռնում նրան, չէք թուլացնում նրա անկման ոյժը:

Պալատականները ուսերը վեր գցեցին, զարմացական հայեացք ձգեցին Ֆլաւիանի վրայ և ցրուեցին. նրանք մտածում էին:

Տարօրինակ մարդ է, կարծես փոքր երեխայ լինի:

— Հի՛ն միամիտներից է:

— Այդ գաւառացիները բոլորը այդպէս են երեւակայում գործը. Ա՛յ փորձիր, մէկ գնա մի խօսք առա.

Ֆլաւիանը տեղից չշարժուեց: Նա առում էր.

— Ձե՛մ հեռանայ: Ձեմ ուղում յոյսս կտրել. կայսեր սիրտը հպատակների համար պէտք է արեգակ լինի. նա չի կարող յաւիտեանս մնալ մնալ ցառման ամպերով:

— Դու, սրբազան, դեռ ևս երկար կսպասես, հեգնութեամբ նկատում էին նրան:

— Թո՛ղ. ինձ համար աւելի հեշտ է այստեղ մենակ մեռնել, հեռու իմ հոգևոր հօտից, իմ սրտակից մարդկանցից, քան վերադառնալ և ի դերև հասնել Անտիոքի յոյսը:

Երբ կեսարը Անտիոքից և Պօլիս հասաւ, Ֆլաւիանի գլուխը թիւնը խոկոյն փոխուեց:

Կեսարը կատարեց հէնց այն, ինչ որ Ֆլաւիանը պահանջում էր Թէոդոսի շրջապատող պալատականներից: Կեսարը մեղմացրեց կայսեր սիրտը:

Նա մանրամասնօրէն զեկուցեց Թէոդոսին, թէ ինչպիսի սարսափ է պատճառում այդ բոլորը քաղաքին:

— Անտիոքացիք արդէն բաւականաչափ պատժուել են իրանց յանցանքի փոխարէն, վախում եմ, թագաւոր, որ դու այժմ աւելի մեծ ցաւ պատճառես նրանց քո արտակարգ պատիժներով:

Յետոյ նա խորապէս սրտաշարժուած պատմեց ժերոշնի ճգնաւորների բարեխօսութեան մասին և կարգաց նրանց միջնորդութեան թուղթը:

— Թագաւոր, զրում էին ծերունիները, մենք քեզանից սպասում ենք իսկական արքայաւայել գործ: Յանցաւորներին պատժելը, նրանց յանցադորժութեան համար տուգանքի ենթարկելը հեշտ է և յարմարաւոր: Այդ կարող է անել ամեն ոք: Մեծ քաջութիւն չէ նաև ազտմածութիւն սփռել երկրի վրայ ուրախութեան և ընդհանուրի ցնծութեան օրերում, դրանում ոչ մի զարմանալի և անսովոր բան չկայ: Դա սովորական բան է: Բայց ասանել, ինչպէս դու, այդքան մեծամեծ անպատուութիւններ, զոպել ցատումը, դա մեծ, ճշմարիտ արքայական գործ է, արքայական ոչ լոկ խօսքով, այլ և սրտով: Մի՛ թափիր ուրեմն, թագաւոր, ցատումը Անտիոքի վրայ: Զայրացած ձեռքով դէն մի՛ հրկիւր ժողովրդի սիրտը քեզ հետ կապելու յարմար առիթը: Դու, իմաստուն կառավարիչ, փորձով գիտես որ ամենազօրեղ իշխանութիւնը պահպանւում է ոչ թէ հպատակների վախով, այլ սիրով: Տուր ուրեմն, կայսր, մեզ քո սէրը. ցոյց տուր նրան ժողովրդին և ժողովուրդը կհատուցանէ քեզ հարիւրապատիկ:

Թէոդոսը լսելով Կեսարի ոգևորուած պատմութիւնը ճգնաւորների և նրանց թղթի մասին՝ մեղմացաւ:

— Ճշմարիտ որ Աստուծոյ լրաբերներն են: Աստուած այս արժանաւոր մարդկանց միջոցով բարեգթութեամբ պահում է իմ անարժան, չարութեան ժամանակ ոխերիմ ձեռքը: Ընդունում եմ նրանց ցուցումը և մեղմացնում ցասումս: Այլ ևս մահուան պատիժ չիլինիլ: Կէսար, այսօր ինձ մօտ հրաւիրիր Անտիոքի սրտաբեկ հովուին, ծերունի Ֆլաւիանին: Նա վաղուց է սպասում իմ ընդունելութեանը: Իսկ քեզ և էլիբրիսին յայտնում եմ իմ մեծ շնորհակալիքը: Դուք ոչ թէ իմ փոփոխական կամքի կոյր կատարողներ եղաք, այլ իմ իսկական օգնականներ. Դուք իմ բանականութիւնն ու խիզճն եղաք, չտաքսալիքիք կրկին հարցնել արդեօք արդա՞ր գործ եմ յանձնել ձեզ: Ո՛հ, որքան երանի՛ կլինէր, եթէ իմ գահի մօտ շատ լինէին այսպիսի ծառաներ: Ո՞րքան հարկաւոր են նրանք և որքա՞ն դժուար է նրանց գտնելը:

Կեսարը ուրախացած շտապեց Ֆլաւիանի մօտ:

— Յրեազան, քո խօսքը կատարուեց: Աստուած մեղմացրեց արքայի սիրտը. կայսրը հէնց այսօր հրաւիրում է քեզ իւր մօտ:

Ծերունին զոգոջուն ձեռքով սկսեց երեսը խաչակնքել.

— Արդ, արձակեա՛ զծառայս քո, Տէ՛ր, ի խաղաղութիւն:

Կայսեր տեսակցութիւնը ծերունի եպիսկոպոսի հետ խիստ

որտադին էր: Ինչպէս Անտիոքում գուշակել էր Յովհաննէ խոնարհ և հեղ ծերունին կայսեր առաջ կանգնելուն պէս հեկեկաց:

— Ների՛ր, արքայ, ների՛ր, խնդրում էր նա թոյլ, զառամեալ ձայնով և արտասուք թափում ու հեծկլտում: Կարծես Անտիոքում կատարուած սարսափները իւր սեպհական յանցանքն էր: Թէոդոսը զառամեալ ծերունի եպիսկոպոսին տեսնելով այդպիսի վշտի մէջ ինքն էլ քիչ էր մնում լաց լինէր: Նա այլ ևս Անտիոքին սպառնանք չէր կարգում, չէր գտնում նրան, նա միայն գանգատուում էր եպիսկոպոսին:

— Ինչո՞ւ վերաւորեցին իմ թանգազին ննջեցեալների յիշատակը: Եթէ ես մի բանով ցաւ էի պատճառել նրանց, թող ինձանից վրէժխնդիր լինէին. իսկ մեռածներին, որոնցից ոչ մի վնաս չէին տեսել, պէտք է խնայէին:

Ֆլաւիանը լուռ, դառնազին լալիս էր. մի փոքր հանդարտելով ասաց.

— Ների՛ր, մեծ արքայ. իմ սիրաւ լին է ցաւով ու վշտով, իսկ մաքերս շփոթուած են, իմ խօսքերը կլինին անկապ: Այն էլ ասեմ, որ գեղեցիկ խօսքեր չեմ բերել քեզ, այլ ժողովրդի դառն արտասուքը և սեպցած վիշտը: Երեսդ մի՛ դարձնել, արքայ. Դու միայն կարող ես ցամաքացնել այդ արտասուքը և դառնութիւնը դարձնել քաղցրութիւն: Նառ վաղուց չէ որ անցեալ Զատիկի տօներից մէկին դու ամենուրեք հրաման ուղարկեցիր բոլոր բանտարկեալներին արձակելու և նրանց յանցանքը ներելու: Եւ կարծես այդքանը բուսական չհամարելով քո մարդասիրութիւնը ցոյց տալու՝ դու գրում էիր.

— Ո՛հ, ի՞նչ երանի կլինէր եթէ հնար ունենայի յետ կանչել և մեռածներին ու մոհուած պատիժ կրածներին յարութիւն տալ:

Յիշի՛ր, արքայ, այդ խօսքերը այժմ: Ահա ի՛սկ ժամանակն է կոչել, յարուցանել, կեանք տալ հաղարաւոր մարդկանց: Խաղաղ կեանք պարգևիր, արքայ, քաղաքին. կենդանացրու նրան. կատարի՛ր աւելին քան կատարեց Մեծ Անտիոքը՝ հիմնելով Անտիոք քաղաքը, թող այժմ ըստ քո մարդասիրութեան անուանուի Թէոդոսիա:

Անտիոքը քաղաքին սկիզբ առաւ և հեռացաւ, իսկ քո մեծութիւնը այն կլինի, որ վերականգնես նոյն Անտիոքը, որովհետեւ նա Արևելքի փառքն ու պարծանքը դառնալուց յետոյ՝ անմատթիւն ունեցաւ ընկնել: Եթէ նրան տիրէին բարբարոս աղգերը կամ յարձակում գործէր որ և է այլ թշնամի, դու կշտապէիր ազատել նրան. դա փառաւոր դործ կլի-

նէր, բայց ոչ այնքան զարմանալի, որքան այժմ, երբ դու ներեա նրան, պաշտպանես քո սեպհական ցասումից: Դու ասում ես, որ քո կրած անպատուութիւնը նախորդներէցդ ոչ մէկը չի կրել, բայց եթէ ուզես, մարդասէր արքայ, այդ անպատուութիւնը կզարգարէ քեզ այնպիսի պսակով, որը աւելի լաւ և աւելի փառաւոր կլինի քան արքայական պսակը: Քո ճակատը զարգարող պսակը հիւսած է նուրբ, ոսկեայ թերթիկներէց, իսկ այն պսակը, որը առաջարկուած եմ քեզ, հիւսած կլինի քո մարդասիրութիւնից: Եւ բոլորը պէտք է հիանան ոչ այնքան քո պսակի թանգագին քարերին նայելով, որքան պէտքէ դովաբանեն քեզ ցասմանդ յաղթելուդ համար: Քանզեցի՞ն քո արձանները. բայց դու կարող ես կանգնեցնել աւելի ևս փառաւորները: Եթէ դու ներես քեզ վերաւորողներին և չենթարկես ոչ մի պատժի, այն ժամանակ նրանք քեզ համար կկանգնեցնեն ոչ թէ պղնձէ, կամ ոսկէ և կամ քարէսիւն հրապարակում, այլ այնպիսին, որ աւելի թանգարժէ քան որ և է նիւթ. նրանք կշրջապատեն քո անունը մարդասիրութեան և ողորմածութեան լոյսով: Նրանցից իւրաքանչիւրը քեզ իւր մէջ կկրէ և դու կունենաս ոչ միայն Անտիոքում և ոչ քո տէրութեան մէջ միայն, այլ ամբողջ մարդկութեան մէջ այնքան արձան, որքան մարդ որ իմանայ քո անունը և մեծահոգութիւնը: Ոչ միայն մենք, այլ և մեր յետնորդներն ու նրանց սերունդները կլսեն այդ մասին, կսքանչանան, կսիրեն քեզ այնպէս, որպէս թէ իրանք վայելած լինէին այդ բարեգործութիւնից:

Թէոդոսը Ֆլաւիանի խօսքերից արտասուելու չափ սրտաշարժուեց և երբ ծերունի եպիսկոպոսը խօսքը վեր ջացրեց, կայսրը մօտեցաւ նրան, փաթաթուեց և համբուրեց: Յետոյ յետ քաշուեց, բայց Ֆլաւիանի ձեռքը բաց չթողեց և սիրով նայելով նրա կնճռոտած դէմքին և արտասուած թոր աչքերին, առաց.

— Բարի հովիւ, նախ քան ինձանից Անտիոքի համար ողորմածութիւն ստանալդ դու ինքդ ինձ մեծ ողորմութիւն ցոյց տուիր. այնպէս գթաշարժեցիր ինձ այս բոպէիս քո խօսքերով, այնքան բարի, լաւ զգացմունքներ զարթեցրիր: Իմ պալատում ոչ ոք այդպէս չի խօսում ինձ հետ: Ձայրանալու, վրէժխնդիր լինելու, պատժելու մէջ բոլորը օգնական են, բայց ինքդ քեզ հանգարեցնելու, կրածդ անպատուութիւնը մոռացութեան տալու, արքայական ներողամտութիւն ցոյց տալու նոյն իսկ դէպի յանցագործները՝ այդ գործերում մենակ ես, ոչ ոք չկայ: Ոչ ձեռք կայ, ոչ լեզու, ոչ սիրտ, ոչ միտք և ոչ ցանկութիւն:

Ո՞հ, Սրբազան հայր, երբեմն շատ ծանր է այս նուրբ ոսկեայ պոսիլը, որի մասին դու խօսեցիր: Ուժս չի ներում մենակ տանելու: Եւ դու, հայր, այսօր ինձ մեծ թեթեւութիւն տուիր, և՛ միւթարութիւն և՛ խրատ... խօսք չեմ գրտնում քեզանից շնորհակալ լինելու: Եւ քո խօսքից յետոյ մի բան միայն կարող եմ ասել Անտիոքացւոց մասին. «Ի՞նչ դարմանալի և մեծ բան է, երբ մենք չենք դայրանալ մեզ վերաւորողի վրայ, մարդկանց վրայ. ո՞վ ենք մենք, նոյն մարդը և այդ այն ժամանակ, երբ Յիսուս Քրիստոս, Աստուծոյ Որդին՝ աշխարհ գալով և մեզ համար ծառայի կերպարանք ստանալով խաչուեցաւ այն մարդկանց ձեռքով, որոնց միայն լաւութիւն էր արել և նա այդ խաչողների համար Հօր աղօթեց ասելով. «Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն»:

Ծերունի եպիսկոպոսը նորից արաասուեց, այդ անգամ ուրախութիւնից: Նա շնորհակալ էր լինում:

— Ա՛րքայ, ես եկել եմ քեզ մօտ ողորմածութիւն, ներողամտութիւն խնդրելու, դու աւելին տուիր մեզ: Դու տուիր ժողովրդի անմտութեան թողութիւն և կատարեալ մոռացում: Այդչափ մեծ չէին մեր յոյսերը, բայց ես ասում եմ քեզ, այդ միայն համապատասխան է քո բարձր զիրքին: Եւ ես ուրախ եմ որչափ Անտիոքի, նոյնչափ ևս քեզ համար. քեզ համար ևս առաւել, որովհետեւ ողորմութիւն անելը աւելի մեծ երջանկութիւն է քան ստանալը: Թող Աստուած պահպանէ քեզ, անքայ, երկա՛ր ու երկա՛ր տարիներ և մարդասիրութիւնը թող մնայ քո մէջ ի բարեբաղդութիւն քո ժողովրդի:

Ֆլաւիանը կայսեր մօտից դուրս գալուն պէս շտապով մի ձիաւոր սուրհանդակ ուղարկեց Անտիոք լիովին ներման մասին աւետիք տալու:

Անտիոքը կենդանացաւ: Հրապարակները դարդարուեցաւ ծաղիկներով. տներն առաջ դորդեր փռուեցին. փողոցների անկիւններում երեկոյեան պայծառ լուսավառութիւն էր լինում. բոլորը ուրախ էին. կարծես քաղաքը վերածնւում էր:

Յովհաննը, բաց չթողեց ժողովրդի այդ ուրախ տրամադրութիւնը. նա ասում էր.

— Նոյնը արէք և ամեն ժամանակ, բայց ուրիշ կերպ: Զարդարուեցէ՛ք ոչ թէ ծաղիկներից հիւսած պսակներով, այլ առաքինութեամբ. ձեր հոգու մէջ վառ պահեցէ՛ք Աստուածային արդարութեան լոյսը և հրճուեցէ՛ք հոգեւոր ուրախութեամբ ոչ միայն նրա համար, որ Աստուած վերջ դրեց այս թշուառութիւններին, այլ և շնորհակալ եղէ՛ք այս փորձանքների համար: Այս դժբաղդութիւնը ոչ միայն մեզ համար օգ-

տակար պիտի լինի, եթէ միայն միշտ մտաբերելու լինենք, այլ և մեր յետագայ սերունդներին: Թող ամեն մէկը մտածէ թէ ինչ բան է այս: Մեր որդիքը կլսեն, որ երբ մի այնպիսի մեծ քաղաք պատժի և լրէժնադրութեան ենթարկուեցաւ, երբ բոլորը դողում ու սարսափում էին, երբ թէ զօրապետներ, թէ քաղաք սպետներ և թէ դատաւորներ չէին համարձակուում ձայն տալ թշուառներին համար—ահա այն ժամանակ մէն մենակ առաջ եկաւ Աստուծոյ միջնորդը, հոգեւոր հայրը և լսի իւր կերպարանքով ու պարզ, անպաճոյճ խօսքով փոխեց ինքնակալի միտքը: Եւ թագաւորը ի յարգանս աստուածային պատուէրի տուաւ ծերունուն այն, ինչ որ չէր տուել իւր հպատակներից ոչ մէկին:

Այս բոլորի մասին խորհելով թող միշտ շնորհակալ լինենք Աստուծոյ ոչ միայն անբաղադրելիները անցնելուց յետոյ, այլ հէնց նրանց պատահելուն համար, որովհետեւ Աստուած ամեն ինչ կարգադրում է յօգուտ մեզ. նոյն իսկ մեր ձեռքով կատարուած չարութիւնը փորձանքների բովից անցկացնելով դարձնում է մեզ համար խրատ:

Մի քանի օր անց, Զատիկի օրերին Ֆլաւիանը վերագործաւ: Հեռաւոր և դժուարին ճանապարհը նրա առողջութեան համար բարեյաջող էր անցել: Ուրախ իւր միջնորդութեան ցանկալի յաջողութեամբը՝ նա ինքն իրան աւելի առոյգ էր զգում:

Գարուն էր: Կենդանարար օդը լցուած էր նորաբաց ծաղիկների անուշահոտութեամբ և սրտաշարժուած ծերունին ամբողջ ճանապարհին հրճւում էր:

— Գարուն է. նոր կեանք. բնութիւնը զարթում է, ամեն ինչ կրկին կենդանութիւն ստանում: Հինը, զառամածը, որը ժամանակին պտուղ է տուել, իւր գործը կատարել, հեռանում է կեանքից, մեռնում է և նրա փոխարէն ձմեռուայ հանգստութիւնից յետոյ բնութիւնը բերում է նոր կեանք. և՛ ծառերի նոր բողբոջներ, և՛ նոր ծաղիկներ, և՛ նոր թևաւորուած երգիչներ և ըստ երեւութին նոր օդ և այլն: Ո՛հ որչափ սքանչելի է. փառք Ատեղծողին որ այնպիսի իմաստութեամբ ստեղծել է կեանքը: Այժմ օ՛ն դէպի հանգիստ: Երկրայինը բոլորը կատարեցի, այժմ դէպի նոր ճանապարհ առ Աստուած:

Այնտեղ նոր կեանք է, վերածնունդ, նոր գարուն:

Եւ ծերունին սայլի յատակին պառկած ժամերով աչքերը յառած նայում էր գարնանային պայծառ, կապուտակ երկնքին:

Անտիոքացիք իմանալով իրանց հովուի դալստեան օրը՝ Ծաղկաղարդին, առաւօտեան վաղ, ամբողջ քաղաքով դուրս եկան ընդ առաջ: Նրանք ճանապարհին մինչև եպիսկոպոսական տունը անընդհատ թնդացնում էին օղբ ուրախ աղաղակով, արմաւենու ճիւղեր էին շարժում, ծաղիկներով ճանապարհը ծածկում: Մայրերը տարածում էին ձեռքերը և աղաղակում:

— Մեր պաշտպանը, մեր պահապան հրեշտակը. Աստուծոյ միջնորդը: Մերունին ուրախ ողջունում էր բոլորին և կրկնում— Այս իմ ծառայութիւնը չէ, այլ Աստուծոյ ողորմութիւնը. ես ոչ մի բանով գործին չեմ նպաստել: Երբ Աստուած թագաւորի սիրտը մեղմացրեց, նա ինքը մինչև իմ արտասանելը թողեց իւր ցամաքը, վերջ տուեց զայրացմանը և խռովութեան մասին խօսելով՝ բոլոր պատահածները յիշում էր առանց բարկութեան: Կարծես ինքը չէր վերաւորուողը, այլ մի ուրիշը: Ես այստեղ ոչինչ չեմ արել, ամեն ինչ կարգադրում է Աստուծոյ բարի կամքը: Փառք տուէր Աստուծուն, իմ որդիք. երգեցէք նրա անունով, «ովսաննա».

Եւ հաղարաւոր ամբոխը արձագանք տուաւ.

«Ովսաննա, ովսաննա՛ ի բարձունս, օրհնեալ եկեալ յանուն Տեառն»:

Թարգ. Գ. Բ. Նոր-Արևեան

Վերջ

